ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 26

«24» 03 2020 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 10 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու և աշխատանքի հավասարաչափ ծանրաբեռնվածություն ու բաշխում կատարելու անհրաժեշտությունից ելնելով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ, 7-րդ և 10-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2020 թվականի փետրվարի 10-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 9-ի N 24 ու 2019 թվականի սեպտեմբերի 25-ի N 43 հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 10 հրամանով հաստատված 2-րդ հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին բաժնի 17-րդ գլխի 55-րդ կետի «Բաժնի ավագ մասնագետ 1» բառերը փոխարինել «Բաժնի ավագ մասնագետ 2», իսկ նույն գլխի «**Ընդամենը 2**» բառերը՝ «**Ընդամենը 3**» բառերով.

2) 25-րդ գլխի «*ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում՝ 121*» բառերը փոխարինել «*ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում՝ 122*» բառերով.

3) 3-րդ բաժնի 40-րդ գլխի 152-րդ կետի «Բաժնի ավագ մասնագետ 2» բառերը փոխարինել «Բաժնի ավագ մասնագետ 1», «**Ընդամենը 4**» բառերը՝ «**Ընդամենը 3**», իսկ նույն

գլխի «*ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզի դատախազությունում՝ 6*» բառերը՝ «*ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզի դատախազությունում՝ 5*» բառերով.

4) 43-րդ գլխի՝ «*ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում՝ 63*» բառերը փոխարինել «*ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում՝ 62*» բառերով.

5) 5-րդ բաժնի «*ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 121*» բառերը փոխարինել «*ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում՝ 122*», «*ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում 63* բառերը՝ «*ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում 62*» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ